


“Droschak”

ORGANE

de la Fédération

Révolut. Arménienne.



Address: A.R.F. BUREAU LIBRARY

Rédaction du “Droschak”

GENÈVE (Suisse)

“ՀԱՅ ՅԵՂԱՓՈՒՄԿԱՆ ԴԱՂՆԱԿՑՈՒԹԵԱՆ” ՕՐԳԱՆ

Պ Ա Ր Տ Ք Ի Հ Ե Ր Օ Ս Ն Ե Ր Ը

Տխուր իր կորուստներով բայց որքան նշանակալից են հիմա մանաւանդ սեպտեմբերի այդ արինահանգը ընդհարումները, որոնք անմոռաց դուրս մը կուգան աւելցնել ֆէդայական կռիւներու փառապանծ տարեգիրքին:

Օսմանեան աղբիւրներէ ներշնչած առաջին հեռագրերէն իսկ դժար չէր գուշակել թէ Երլորդին մը տահոգութիւն պատճառով այդ պատահարները սովորական բաներ չէին:

Եւ արդարեւ իրարու ետեւէ հասնող երկու թղթակցութիւններ. — մասամբ իրար լրացնող — կուգան հաստատել մեր վախը, որ զգացած էինք առաջին հեռագրերը ստանալուս:

Իրաշնչեցութեան զինակիր խումբերէն մէկը իր ճամբուն մէկ մասը ապահով ու անվտանգ անցնելէ ետք, Բայազէթի Այնթափ գիւղին մօտ կը բաղխի յանկարծ թշնամի շարքերու...

Ֆէդայիներուն փնտռածը առ չէր հիմա, բայց ելք չկար. և բռնաւորած, կամայ-ակամայ խումբը կը հարկադրուի կրակ բանալ, ճամբայ բանալու համար...

Եւ հերոսական քաջագործութիւններու երկար շարք մը ահա կը գծէ այդ ուղին, Բագրևանդի խրոխտ լեռներէն մինչև Նազիկի նազուկ պիերը: Համիրիէներ, հասնանցիք, կանօնաւոր զինուորներ իզուր կը ճգնին փոխն իփոխ իրենց ահաւոր կոյտերուն տակ ճգմելու այդ բռու մը քաջերը, որոնք անօթի ու ծարաւ կը յառաջանան անվկանդ, կը յառաջանան, ճեղքելով թշնամի շարքերը հրով ու սրով, և կ'անհետին յանկարծ առասպելի դեւերու պէս, սարսափի ուրաւկանը և արիւնի աղօս մը ձգելով իրենց ետեւէն...

Տակաւին ծանօթ չեն մեզ այդ հերոսական ընդդիմադրութեան բոլոր դրւագները: Ֆիւրդի մը պատմածը մեր առաջին թղթակցութեան մէջ հաղորդած, անոր առաջին դրւագը կը կազմէ հաւանօրէն, իսկ հետագաներն ալ երկրորդ թղթակցութիւնը համառօտի միայն կ'ուրագծէ:

Այդ առաջին դրւագն արդէն կը բաւէր յատկանշելու երկու հակամարտ կողմերը:

Ֆիւրդը մոռցած չէ տակաւին թէ «Ֆէդայիին գնդակը կը հետապնդէ զինքը, կը գտնէ ու կրսպանէ» և վատերը, մահէն վախնալով, և իրենց բազմութեան վրայ վստահ կ'առաջարկեն ֆէդայիներուն, որ անձնատուր լինին իրենց:

Անմիտ ու լիբր կատակ մը... յանձնել հրացանները... անձնատուր լինել քիւրդին...

Բայց ֆէդային ուխտած է այդ հրացանները տեղ հասցնել իր կեանքին գնովը, կանգ չառնելով ո՛չ մէկ զոհողութեան առջև, ոտնակոխ ընելով ամէն արգելք: Որքան քրտինք ու արիւն արժած էին իր այդ անշունչ բայց միակ բարեկամները, և դեռ քանի կեանքեր փրկելու սահմանած...

Ֆէդային չի դաւաճաներ իր ուխտին. մահուան պրոկոմներու մէջ սառած իր ձեռքն իսկ պիտի մերժէ իր հրացանէն անջատելը:

Եւ քաջերը քաջի պատասխանը տալէն ետք, կը պատրաստին թանկ ծախելու իրենց հրացանները և իրենց կեանքը...

Կատաղի կռիւներու այդ շարքը թեթեւ կորստով մը չէր կրնար վերջանալ անշուշտ. բայց թշնամիին կորուստը, որ գրեթէ տանապատիկ աւելի կը ներկայացնէ լրաբեր քիւրդը, անբաղդատելի կերպով մեծ պէտք է համարել եթէ ինկատ առնելն անհաւասար պայմանները: Եւ առ լոկ կը բաւէ ապացուցելու թէ ի՞նչ մոլեգնութեամբ կուած են հայերը, մանաւանդ ձեռնամերձ ճակատամարտին ատեն:

Սակայն այդ նկատումները միխթարելու համար պէտք կուգան միայն. կորուստը կորուստ է, այդ մեռնող քաջերը տարբեր կերպով կարևոր օրւան մը մէջ կը տննչային ու կրնային մահը տեսնել...

Եւ հո՞գ է արդէն իրենց մահուան բուն եղբրական կողմը: Ի՞նչ գործ ունէին այդ մէջին ու խաթմին, այդ մանազկերացին ու առձէշցին, Վասպուրականի ու Տարօնի այդ սովատանջ ու ջարդակոծ գաւառներու արի գաւառները, ի՞նչ գործ ունէին, կ'ըսենք, այդ լեռներուն ու առապարներուն մէջ. ի՞նչը կը գրգէր հովէն ու արևէն մրկած այդ դաժան դեմքերը, արհամարհել ցուրտն ու բուքը, քաղցն ու ծարաւը խեղդել և, հեռու մարդաբնակ վայրերէ, գիշերը ցորեկ ընելով, քալել անդադար քալել, թանկագին բեռը իրենց ուսին ու մահուան արհաւիրքը աչքերնուն առջև...

Որովհետև այդ մարդիկը ահաբեկի ուժգնութեամբ մը կը զգային թէ ինչպէս օրէ օր աւելի խոր կը երւին իրենց միսերուն մէջ ծծոցները այդ քստմնելի մակարոյծին — օսմանեան բռնակալութիւն կողմէ — որ կը սպառնայ քամի ու չորացնել Թիւրքիոյ հայութիւնը, եթէ ժամ առաջ հզօր ձիգ մը չպատրաստուի հետու նետելու այդ զագրելի օրգանիզմը...

Ի՛նչ ջանքեր չլծափեցին մինչև հիւս մեր թշնամիները յեղափոխական ոգին հայութեան մէջ վերջնապէս մարած հոգնակելու, և հայ ժողովուրդը ներկայացնելու իրր յուսահատ թշուառ մը, որ չոր հացի փրդուածը մուրալով դառա՞ծ է միայն: Տանջուող հայը տաւ իր պատասխանը: Քօշկայ լեռան, Քաթալիւնի և Փրիւուսի կրօնները պերճախօս կերպով երևան կը բերեն թէ ինչպէս կը հասկնայ իր դրութիւնը երկրին ժողովուրդը և թէ ուր կը փնտռէ իր խրատունները:

Անցեալ անգամ այս էջերուն մէջ ակնարկելով այն Գործին, որ ժողովուրդը կը սպասէ յեղափոխական կազմակերպութեան, անդու, յամառ և երկար աշխատանքի մը պէտքը մատնանիշ կ'ընէինք, ձեռնարկած ջանքերը յաջողութեամբ պսակել կարենալու համար:

Որո՞ւ մտքէն կ'անցնէր որ այդ տողերը գրւած միջոցին այդ Ծրագրին մէկ մասն իրագործելու հետամուտ խումբերէն մէկը, հայաստանցիներ, հարկադրւած պիտի գտնուէին, ճակատագրին դառն անակնկալով մը, իրենց կեանքի զոհովն իսկ փայլուն ապացոյց մը բերելու կատարւած և կատարուող ճիգերու մեծութեանը... Որովհետև յուսահատի ոգորումներ չեն սեպտեմբերի այդ կռիւները: Անգուց անդադրում զարգացող և տարածուող բազմաձիցի, հզօր ու աներևոյթ ցանցի մը օղակներէն մէկուն շնորհալից խորտակումն է ատ, որ յոյսի և գործի հեռապատկերներ կը բանայ յուսահատութեան մէջ խեղդել տալ ուղու ժողովուրդին...

Սեպտեմբերի այդ հերոսական կռիւները չեն կրնար մոռցելի և չպիտի մոռցւին:

Տանջուող հայ ժողովուրդը հպարտութեամբ ու խանդաղատանքով պիտի յիշէ այդ քաջերը, որոնք մահը գրկեցին, մահուան դէմ զինելու համար իրենց եղբայրները: Հայ յեղափոխութիւնը պիտի պարծի ատոնցով, որոնք գիտցան իրենց պարտքը կատարել իրենց կեանքին զոհով, հաւատարիմ ֆէդայի-զինուորի նշանաբանին:

Հանգիստ ձեզ, թանկագին ընկերներ, որ յաւիտենական քունը կը ննջէք Արածանիի ալիքներուն և նազիկի ծփանքներուն օրօրին տակ...

Ձեր յիշատակը ուժ պիտի տայ մեզ մեր արդի ծանր ու դժոխակ պայքարը մղելու, և ձեր ուրականները պահպան ոգին ու թշնամիին սարսափը պիտի մնան երկար արցունքներու այդ հովտին մէջ...

Դ Ի Ի Յ Ա Ջ Ն Ա Կ Ռ Ի Ի

ՉԻՆԱԿԻՐ ԽՈՒՄԲԻ ՄԸ ՅԱՂԹԱԿԱՆ ՉՈՒՆ

Բ Ա Գ Ր Ե Ի Ա Ն Դ Ե Ն Խ Լ Ա Ր

(ՆԱՄԱՎՈՅՆ ԹՈՒՍՏԱՆՍԱԿԱՆ ՍԱՄԱՆԱԳԼՈՅՆ)

20/2 հոկտեմբեր 98

Սեպտեմբերի առաջին օրերուն մէջ արիւնահեղ կը ունէր տեղի ունեցեր է Բագրևանդէն դաղանի անցնող մեր զինակիր խումբերէն մէկուն և քիւրդերուն միջև:

Ստոյգ տեղեկութիւններ ստացած չենք տակաւին մեր ընկերներէն, ուստի կամայ ակամայ հարկադրւած ենք առ այժմ շատանալ կուրի դաշտէն եկող քիւրդի մը պատմածով, որը կը փութանք հաղորդել ձեզ երկուստեք կորուստի մասին ամէն վերապահումով:

Այդ խումբը Բայազիդի Այնթափ գիւղին մօտերը կը հանդիպէ 6 զինւած քիւրդի: Իր ներկայութիւնը մատնել չտալու համար, ֆէդայիները հարկադրւած էին սպաննել ատոնք: Քիւրդերէն չորսը կ'իյնան, բայց երկուքը կը յաջողին փախչել ու խուճապ ձգել շրջակայքը: Հայ ֆէդայիներ երևալու լուրը տակնուվրայ կ'ընէ մերձակայ քիւրդ ցեղերը: Քիչ ժամանակի մէջ խառնիճաղանճ հոծ բազմութիւն մը քիւրդ, համդիէ, զինուոր — լրաբեր քիւրդին ըսելով 1,500-2,000 հոգի — կ'աճապարէ Այնթափ, ֆէդայիներուն առջևը կտրելու:

Փախուստի ճամբանին կտրւած — յանկարծակիի դալերնուն — մեր խումբը այդ մը կ'ապաստանի, ուր պաշարւած կը մնայ երեք օր:

Թշնամին, հակառակ իր թւով առաւելութեանը, չի համարձակիր գրոհ տալ այրին վրայ: Քիւրդերու պատերազմական խորհուրդը, երկար վիճաբանութիւններէ ետք, խոհեմութիւն կը համարի բանակցութեան մասնել պաշարւածներուն հետ և առաջարկել անձնատուր լինել իրենց: Իսկոյն բերել կուտան Բագրևանդի Ա. Յովհաննէս վանքին վանահայրը և կը ստիպեն զինքը որ անձամբ տանի այդ առաջարկը և իր կողմէն ալ համոզէ ֆէդայիները:

Ասոնք յանդիմանելով վանահայրը քիւրդերուն առաջարկը ընդունելուն համար, կը պատասխանեն.

— Քիւրդերը կ'ուզեն մեր հրացաններն ստանալ, թող գան մեր ձեռքէն առնեն:

Վանահայրը ետ ձամբելէն ետք, ֆէդայիները դուրս կը խուճեն այրէն:

Վրսկեի կատաղի կռիւ մը:

Քիւրդին պատմելով հայերը իրենց բազմահարկութեան մօտիներով հրաշքներ կը գործէին, մինչդեռ քիւրդերը մէկ-մէկ միայն կրնային արձակել:

Թշնամին բազմապատկիլ տեսնելով, ֆէդայիները մարդ կը խրկեն Սերոբին խմացնելու իրենց տագնապալի կացութիւնը և օգնութիւն խնդրելու անկէ: Սերոբը տունը չի գտնուիր այդ միջոցին, ուստի իր կինը, առանց ժամանակ կորսնցնելու, կ'առնէ Սերոբի խումբը — մօտ 200 հոգի — և կը փութայ կուրի դաշտը, ուր քիչ ետքը Սերոբն ալ կուգայ կը հասնի:

Նոյն ատեն քիւրդերն ալ կը դիմեն Բայազիդի փաշային, թնդանթներ խնդրելով անկէ, բայց մերժում կը ստանան:

Վո՛ւր կը վերջանայ Փէդայիներու նահանջով:

Հայերը կը կորսնցնեն 43 հոգի. երեք վերաւոր ալ գերի կը բռնեն:

Քիւրդերուն կորուստը մօտ 300 հոգի կը հաշւի:

Թիւրք պաշտօնական աղբիւրները այդ Փէդայիները Մուշի, Բուլանըխի, Խլաթի և Առձէշի բնիկներ կը համարին. սպաննած կը հաղորդեն 55 հոգի, երեք ալ վերաւոր: Իսկ քիւրդերու կորուստի մասին պերճախօս կերպով կը պատանձին:

\* \*

12/24 հոկտեմբեր 98

Այս պահուս կըստանանք ընկերոջ մը համառօտ նամակը, որ բոլորովին նոր լոյս կը սփռէ X. զինակիր խումբին ունեցած ընդհարումներուն վրայ: Մէկ կուր մը չէ տեղի ունեցած, այլ շարք մը կռիւներ, և քիւրդին պատմածը — որը նախորդ նամակովս հաղորդած էի — անոնց մէկ միջոցէպէս կը կազմէ հաւանօրէն:

Սեպտեմբեր 3-ին առտուն՝ արշալոյսին, զինակիր խումբը կը հասնի Բագրևանդի. Քօշկայ լեռան ստորոտը, ուր մտադիր էր ցորեկը հանգստանալ գիշերը ձամբան շարունակելու համար: Փէդայիներու ներկայութիւնը կը մատնէ սակայն և համիդիէ ձիաւորներ առտունէ արդէն յարձակում կը գործեն յոգնած խումբին վրայ: Համիդիէները կը փորձեն կատաղի արշալով մը շփոթ ձգել խումբին մէջ, բայց մօսինի գնդակներու տարափին տակ կը հարկադրին ետ դառնալ: Բազմաթիւ դիակներ թողնելով գետինը:

Այդ միջոցին օգնութեան կոչը արդէն հասած էր շրջակայքը, այլ և այլ տեղերէ կանօնաւոր զինւորներու խմբակներ ու քանի մը կատաղի քիւրդ աշխրթներ շատ չանցած կը լեցւին լեռան ստորոտը: Վո՛ւր կը բորբոքի աւելի կատաղութեամբ. մեր ընկերները, որոնք դիրք բռնած էին արդէն բլուրի մը վրայ, կուր կըսկսին պատերազմական երգերով: Մօսիները կարկուտի նման կը տեղացնեն գնդակները, և թշնամին բաւական կորուստ կըրելով, մոլեգին ձիգեր կը փորձէ Փէդայիները իրենց դիրքէն խախտելու. իզուր, առասպելական գնդակները մահաւան մանգողին պէս կը հընձէին առաջին շարքերը, իսկ երգերու խրոխտ ու բամբ հնչիւնները յուսահատութիւն միայն կը ներշնչէին քիւրդերուն:

Վո՛ւր կը տեւէ ամբողջ օրը, մինչև մութը կոխելը: Թշնամին հակառակ իր բազմութեան չի յաջողիր մօտենալ Փէդայիներուն, և բաւական զոհ կուտայ. մերիները այդ ամբողջ օրը ոչ մէկ կուրուստ չեն ունենար:

Մութը պատելէն ետք զինակիր խումբը բլուրին հակառակ կողմէն աննկատելի կերպով կ'իջնէ և կը շարունակէ իր ձամբան: Երկու ժամ անընդհատ քայլելէն ետք, կը նստին հանգստանալու. հոգ ինքզինքը զգալ կուտայ հայ զինւորի բուն թշնամին. անթափութիւնն ու ծարաւը: Ամբողջ այդ օրը և նախորդ գիշերը բան մը կերած չէին, որովհետև վերջին իջևանէն չէին յաջողած հաց առնել և յոյսերնին դրած էին

կուր պատահած տեղին վրայ: Վուրու ատեն ձիոյ է կը մոռցի քաղցը, բայց աւելի սաստկութեամբ զգացելու համար ետքը: Գէշը ան է որ ջուր ալ գտած չէին. և յայտնի է թէ որքան կը տանջէ ծարաւը, մանաւանդ կուէն ետք: Բայց ինչ կրնային ընել անկարելիին դէմ, և ահա կը պատրաստին ձամբայ ելլալու, երբ յանկարծ գիշերական մութին մէջ կը լսի ձիերու դոփիւն մը... Քիւրդերն էին, որոնք կը հետապնդէին զինակիր խումբը, ցորեկան իրենց կորուստներուն վրէժն առնելու...:

Թշնամին կը նշմարէ մեր խումբը և չորս կողմէն կըսկսի թափուիլ ու շրջապատել. առաջ գնալ անկարելի էր, պէտք էր ձեղքելով ձամբայ բանալ:

Թթութիւնը կը նպաստէ թշնամին մօտենալու, և երկու կողմերը կը խառնուին իրար: Կըսկսի զարհուրելի ձեռնամերձ կուր մը: Մէկ վայրկեանի մէջ դաշտները կը շողան և կըսկսին իրենց աւերիչ գործը այդ խաւարին մէջ: Ծակատ ձակաի եկած էին, խնայել չկար հոգ: Փէդայիները կատաղաբար կ'իյնային դիմացը հանդպողին վրայ, կը զարէին, ոմանք սպանուողներու զէնքերը կը վերցնէին և այդպէս անընդհատ կը յառաջանային դիակներու մէջէն: Ծամբելով կը տեւէ այդ ճակատամարտը, մինչև մերիները կը յաջողին վերջապէս ձամբայ կտրել մինչև Քաթապիկա լեռը: Թշնամին սարսափած իր ունեցած կորուստէն, և չկրնալով այլևս դիմանալ Փէդայիներուն յարձակումին, ետ կը դառնայ հիմա, թողնելով հայրենիքի գաւակներուն շարունակել իրենց ձամբան:

Գիշերային այդ կուէն դարձող քանի մը քիւրդեր Փէդայիները դեւերու նմանցուցած են, պատմելով թէ ինչպէս անոնք առանց նշան առնելու կը տապալէին քիւրդերը, գլխէն կամ աչքէն հարածելով:

Մերիները 8 ընկեր կը կորսնցնեն այդ գիշերական կուէն մէջ:

Լոյսը սկսեր էր բացուիլ երբ կը հասնին Քաթապիկայի ստորոտը: Այս անգամ բարեբախտաբար ջուր կը գտնուի, բայց նորէն հաց չկայ. և արդէն երկրորդ օրն է որ յոգնած Փէդայիները բան մը դրած չեն բերանին: Խումբին մէկ մասը մօտակայ գիւղ մը կ'երթայ հաց ձարելու, միւս մասը լեռը կը բարձրանայ դիրք բռնելու, որովհետև կուր կը նսար ցորեկը վերստին նորոգուի:

Կը լուսնայ վերջապէս. գիւղ գնացող ընկերները հաց վերցնելու ժամանակ չեն ունենար. գիւղին մօտը կամ մէջը կուր կը բռնուին և կը ցուրին: Իսկ լեռը դիրք բռնողներու վրայ կուր կուգան հասնանցի կատաղի քիւրդ աշխրթէն ձիաւորներու սուար խումբ մը: Լեռան խումբը թէև յոգնած, քնատ, անթի, և թուով նւազած, չընկճւիր և յանդգնութեամբ կը կուր, ուխտած լինելով զէնքը ձեռքին մեռնիլ կամ մեռցնել: Վո՛ւր կը տեւէ մինչև իրիկուն և թշնամին ետ կը քաշուի, դիրքերուն տիրանալէ յոյսը կտրած:

Այդ կուր մէջ 6 ընկեր կ'իյնան:

Երբ մութը կ'իջնէ, Փէդայիները դիրքերը կը թողնեն և կըսկսին մաս-մաս հեռանալ: Այդ փոքր խմբակները իրարու հեռքը կորսնցնելով, անջատ անջատ կը շարունակեն ձամբանին:

Այդ խմբակներէն մէկը — 8 հոգի — հետեւալ օրը ջրաղաց մը կ'ապաստանի: Թշնամին հոտը կ'առնէ և

ջրաղացը կը պաշարէ: Տղայքը արդէն հաց գտած և կազդուրած լինելով, կ'որոշեն սուղ ծախել կեանքերուն և առիւծի պէս կը սկսին կուրծի թող չտալով որ մօտենան ջրաղացին: Քիւրդերը կը կործան նաւթով կրակ տալ շէնքին, բայց չեն յաջողեր, աս ալ հրաշքի տեղ կ'անցնի ու վախ կը ձգէ քիւրդերուն սիրտը: Դեռ չմթնած՝ ֆէդայիները դուրս կը խուժեն ջրաղացէն ու ձեղքելով թշնամին, առաջ կ'անցնին, մէկ ընկեր միայն զոհ տալով ջրաղացին մէջ մինչդեռ թշնամին հող ալ բաւական կորուստ կ'ունենայ:

Ջրաղացի խմբակը մօտակայ գիւղին մէջ կը հանդպի ուրիշ ընկերներու և ահա Ձե հոգիի խումբ մը կազմելով, կը դիմեն երկրի ներսը և կը հասնին Խլաթի Փրկուս գիւղը (Նազիկ ընկեր ամբիս):

Այս անգամ իրենց ետեւէն կը հասնի կանօնաւոր զինուորներու վաշտ մը և կուրծ նորոգելով կը տեւեւ ամբողջ օր: Թիւրքերը այդ կուրծ մէջ կը կորսնցնեն բաւական զինուորներ և հարիւրապետ մը: Ֆէդայիներէն զոհ կ'երթայ մէկը միայն, որ յանդգնութեամբ առաջ կը նետուէր կուրծի ատեն, սպաննած ընկերներու վրէժով բորբոքած:

Արևը մայր կը մտնէ, թիւրքերը կը քաշին, և այս անգամ կ'աներևութանան ֆէդայիներն ալ, առանց հետք մը սակայն թողնելու...

Ն Ա Մ Ա Կ Կ. Պ Օ Լ Ս Է Ն

1/13 հոկտ. 98

Ճակատագրին մէկ հեգնութեամբը ամէնէն հզօր բըռնակալներն իսկ մահուան երկիրդէն խաղալիք կը դառնան ոտքերուն տակը չնթող ստրուկներուն ձեռքը, եւ ասոնք մեծագոյն վարպետները եղած են միշտ այդ վախը շահագործելու մէջ:

Մեր վախկոտ Համիդին էր մնացել բացառութիւն կազմելու ինքնը գիշեր-ցորեկ Դամոկլէսի սուրին պէս, հայ ուռմբ մը կը տեսնէ գլխուն վրայ կախած, վայրկեանէ վայրկեան պատրաստ պայթելու, ու սարսափը քանի կ'երթայ կ'աճի ու կ'աճի սիրտին մէջ, նոյն իսկ անկախ հայ յեղափոխական շարժումին ընթացքէն: Խնդիրն ան է որ, անօթի ողորմելիներու լեզուէն մը, ամուսնով եւ անանուս արարածներ, ամէն ազգէ եւ դասակարգէ, ղմիմեամբ զեն — ինչպէս պիտի ըստին հիններ — հրահրելու այդ սարսափը եւ Համիդին սիրտը անխաղար գողի մէջ պանելու: Այդ զազրելի մակաբոյժները բան գործ չինած են իրենց՝ օր նոր սուտ նոր մը հնարել պատրաստող յեղափոխական ցոյցերուն եւ դաւերու մասին եւ վազել տեղեկագրել պալատը իրենց հաւատարիմ աշակերտութեան վարձը մուրալու եւ... ստանալու անվրէպ յոյսով:

Եւ երկրորդ թշուառականը որ գլխէն մինչեւ պոչը կը ճանչնայ բոլոր այդ գեռուները ու զիտէ անոնց փորցալը — կը շոյէ ու կը շոյէ այդ տափակ գլուխները ու անոնց գողը կը լեցնէ իր արիւնտ ոսկիներէն: Փիլիսոփայաբար կը նայի գործին. ինչը պիտի պակասի, եթէ ականջ դնէ անոնց, ոսկիներ միայն է, ողջ ըլլան հպատակները. իսկ եթէ չլսէ անոնց ու յանկարծ հագարէն մէկը իրաւ ելլայ... չէ՛ աւելի լաւ է հաւտայ ու անոնց երես տալ:

Եւ անա անվերջ կը շարունակի այդ խաղը յոռի շրջանակի մը մէջ. գահակալութեան տարեկարծին կը յաջորդեն յեղափոխական տարեկարծներ, անոնց ետեւէն կը հասնի Վիլհելմի մը այցը, սպա ուսմազանը եւ այսպէս անընդհատ կը յաջորդեն իրարու. «դաւադրա-

կան» օրերը, տարականոն ուղղութիւն մը տալով Թիւրքիոյ ներքին գործերուն:

Հայերը վերջին տեղը չեն բռներ մակարոյժներու այդ վրոճակներուն մէջ. չէինք զարմանար սակայն — գիտնալով մեր բարքերուն արդի ցաւազին վիճակը — եւ բաւ կը համարէինք ար ձ. ան ա գ թ ի լ այդ ողորմելիներուն անուանները, որոնք Նուրբանէն ու Բարթուղիմէօսէն ետք, Պիւլպիւեան, Նիկողոս Աղաանան, Յարութիւն Ապանեան եւ այն կը կուշէին...

Ձեր արժեք իսկ յիշել ատոնք, եթէ նոր անուն մը մեր ուշը չհրաւիրէր պահ մը այդ տխուր շարքերուն վրայ: Թիւրքը առաջադէմ կողմած մամուլին ներկայացուցիչներէն մէկը, մեր մէջ ալ բաւական ծանօթ բանասէր մը, Իզմիրլեանի նախկին քարտուղար մը — Տիրան Բէլէկեան — իր ընդունակութիւնը փորձել սկսած կը թւի հիմա այդ ասպարէզին մէջ. Ս. րոքօք հին դերերը յոգնեցուցած են զինքը. շատ շուտ է սակայն Ադոտ կը յիշենք արգարեւ թէ մարդերութեան 1890 թւին յեղափոխական շարժումը քաւած անցած էր Բէլէկեանի քովէն, ինչպէս քանի մը իր բարեկամներուն: Իմացանք որ երկու տարի չկայ, Եւրոպայէն չհարձած տակաւին, «Ժէժօն թիւրք» կը համարուի եղեր Լօնդոնի մէջ. Գիտէինք որ իբր «Ժէժօն թիւրք», տիրահոչակ Մուրադին հետ գրեթէ միատես վերադարձաւ Պոլիս, Ահմէդ ձէլալէդդինի պաշտպանութեան տակ, եւ պաշտօն ալ ըստ ստացաւ Անճուական Գանձուէն նախարարութեան մէջ, Լսած էինք թէ ոսկի շղթաները չէին Բէլէկեանը Պոլսի հետ կապողը, այլ ընտանեկան սէրը: Իր պատուին համար ուզած էինք հաւտայ այդ բացատրութեան, թէ թեւ ա միտ մակդիրը բաւական համարելով այդ պիտով մօրուքով մարդուն համար, որ քիչ-չատ կարացած ու աշխարհք տեսած ալ էր, որ գոնէ 1890-էն ետքը ղեւցազնական կատակերգութիւն մը կարծելու չէր յեղափոխական շարժումը եւ իր ուժերը կոտրելով ճամբայ ելլալու էր: Ամէն մարդէ հերոսութիւն չի պահանջուիր, բայց ուտել չկրցած ապուրն ալ եփելու չէ:

Այս վճիռով կարելի էր մոռացութեան քօղը քաշել այդ պարոնին երեսին վրայ, բայց Բէլէկեանը հանգիստ չի կենար. թաքուն յատկութիւններ կը սկսին պղպշակի իր հոգիին մէջ. «Երիտասարդ թիւրք» երու մէջ ճարակող chantage-ի հիւանդութեան ինքն ալ վարակած կը թւի: Ամիսներ անաջ անպատիւ մարդու մը, արքունի լրտեսապետին Ահմէդ ձէլալէդդինի յանձնարարութեամբ Եւրոպա մեկնեցաւ, յեղափոխականներու «օճախները» ոսկի անձրեւով մարելու համար Առաքելութեան լուրը իրմէն առաջ հասաւ Եւրոպա եւ խեղճ Տիրանը շքմած, հաշիւներուն մէջ կանխած, լեղուն ներս քաշեց ու ծպտուէ չհանց. «Սապահ»-ին թղթակցելու համար մեկնեց է եղեր Պարիզ: Թիւրքիան, «Սապահ»-ը, Բէլէկեանի դարձն ու նոր պաշտօնը, Ահմէդ ձէլալէդդինի հետ իր բարեկամութիւնը գիտցողներուն համար պոչաւոր սուտ մըն էր ատ: Ու Բէլէկեանն պոչին վրայ նայելով եւ դարձաւ:

Ժամանակը ասոր վրայէն ալ թերեւս իր սպունքը ըսէր, եթէ դէպքերու նոր օղակներ չգային շղթայ մը լրացնելու: Սեպտեմբերի մէջ տեղեկագիր մը կը ներկայացուի պալատը թէ Ս. Ռաչին օրը ցոյց պիտի ընեն հայերը: Թէ հայ յեղափոխական կոմիտէները վերջնազիր մը տուած են արդէն վեց մեծ պետութիւններուն, պահանջելով 15 օրուան մէջ բարենորոգումներ մտցնել Հայաստան, սպանալով հակառակ պարագային, արիւն լալ ընել բոլանդակ Թիւրքիան: Այդ տեղեկագիրը Բէլէկեանը կրատորագրէր:

Անցաւ Ս. Ռաչը եւ հասաւ Պոլիս Թիւրքիոյ մեծ խաչագողը Վիլհելմի Բէլէկեան ներշնչում մը կ'ունենայ, այս անգամ աւելի ցնցիչ ու խնդի աւելի մօտիկ սուտ մը հնարելու: Դաշնակցականները, կըսէ, կը պատրաստուին ուռմբ նետել Վիլհելմի կառքին վրայ, Սէլալիքէն դարձին: Խօսք չկայ. անա՛ գլուխ գործոց մը որ համբաւին խարխիւն է:

Աւելորդ է ըսել թէ Բէլէկեաններու կարգի մարդոց

ՈՒԺԵՐԻ ԿԱՄԱԳՐՈՒԹԻՒՆ

արարքները անակնկալներու շրջանէն ելած են շատոնց: 1890-էն ի վեր շատ առիթներ ունեցանք չափելու ու կրկին չափելու Պոլսի մեր բանասէրներուն ու խմբագիրներուն հասակը: շատերուն համար կարելի եղաւ ըսել աւաղ, «չափեցաւ եւ պակաս գտաւ...»

Քէլէիէանները աղէկ կ'ընեն եթէ քիչ մը կ'ընեն ըրածներնուն հետեւանքները եւ պթափելով այն զգլխիչ բուրուճներէն — որը maitre-ի մը պէտք ունեցող «չօճուխներ» կը ծխեն անոնց քթին տակ — յիշեն թէ մոռցած քրօնիկներն ու գիշերաջան իմաստակութիւնները քաղաքացական այն սերտ առաքինութիւնները չեն որ կրնան մեղմացնել տալ իրենց դատապարտելի ընթացքը: այն երկրին մէջ, ուր կեանքի ու մահուան պայքարը կը մղւի այսօր...

\* \*

Երկու խօսք ալ մօլլա-եպիսկոպօսին վերջին արարքներու մասին, որոնք վերջնապէս կը յատկանշեն այդ անորակելի արիւնին

Ոսագիւղի 96-ի շարդէն վնասող ընտանիքներուն բաշխելու համար, Բ. Դուռը, ամէնալով, 1,500 ոսկի յանձնած էր տեղապահ Բարթոլոմէոսին: Սուրբ գազանը շտրհակալութեամբ կը գրպանէ դրամը եւ կըսկսի... կալածներ գնել, կարկանդակին փշրանքները միայն բաժին հանելով այդ թշուառներուն: Համբերութիւնը հոս ալ իր չափը ունի. ազգային իշխանութիւնները Օրմանեանի օրով սիրտ կ'ընեն վերջապէս հաշիւ պահանջելու նախկին տեղապահին այդ գումարի գործադրութեան մասին: Ի՞նչ կ'ուզէք որ պատասխանէ մեր մօլլան. «Հայիւք ես պալատ տւեր եմ, ձեր ի՞նչ գործն է»: Ուզողը թող երթայ հարցնէ պալատը, մեր գիտցածը աս է որ սրբազանը բաւական կ'որ գումարներ նետեց քանի մը («ազգային») ներու կոկորդը, պատրիարքական վերջին ընտանիքներու ատեն անոնց քէն շանելու համար: Այդ պարուններուն անունները ծանօթ են մեզ, բայց կը յետաձգենք իրապարակումը, մինչեւ քանի մը մանրամասնութիւններ ալ ստուգւին:

Նուրբան ու Բարթոլոմէոս յուսահատողներէն չեն գոնէ չար նպատակ մը հետապնդելու ատեն, ու գիտեն ամէն առիթէ օգտուի: Մինչ գբաղած էին — եւ հիմա ալ դեռ զբաղած են — Սահմանադրութեան տակը փորելու, Սահ կաթնուղիօսական խնդիրը կը բարձրէր ու կը կծկէր: Գլուխ զլիւռ տւին եւ հանճարեղ գալաճանութիւն մը յղացան: Հետեւեալ օրը պալատ ուղղած իր տեղեկագրերէն մէկուն մէջ մօլլա-սրբազանը էջմիածնի կաթնուղիօսութիւնը հայ ազգին համար վընասակար հաստատութիւն մը կը ներկայացնէր, եւ միանգամայն թիւրքի տրտման շահերն ապահովելու միակ դարմանը կը նկատէր: Կ. Պոլսի պատրիարքութիւնը շնչւել, ու Սահ գահը Պոլսի փոխադրելով անկախ հրռչակել էջմիածնէն Պատրիարքական աւանդութիւններն ալ իսպառ սրբելու համար, կաթնուղիօսարանը հաստատել կ'առաջարկէր Միջագիւղի մէջ, Ալլանլէրի Աբրահամ ամիրային ապարանքը, բնակարանքար — գորութեամբ հասկնալու է — Բարթոլոմէոսին ալ կաթնուղիօս ընտրել տալով: Տանն կ'իլիկիոյ: Ի՞նչ փառաւոր զոյգ մը Ապարեանին:

Չենք զիտեր թէ շատ պիտի տեւէ՞ սակաւին իրերու այս գայթակղայից ու խայտառակ կացութիւնը: Բարթոլոմէոսներ, Աշրգեաններ, Մեսրոպներ, Միհանեաններ խոզի պէս կը տապալակին սուլթանին ազատ ուղիներուն մէջ, իր փանդիկն կը մեծցնեն Վօսփօրի ալիբօն վրայ, եւ ազգային ոչ մէկ գործի օգտակար ըլլալէ դատ — աս էր պակաս — քարեր ալ դեռ կը նետեն ազգի սայլին խարխլած անիւներուն տակ...

Պատրիարքարանին պարտքն է այդ սեւախրտ սեւագլուխներուն բերներուն չափը տալ եւ շնթակելիք տեղերին ցուցնել: Ա՛տ ալ մենք պիտի յիշեցնէինք:

Ժամանակը սահում է. մարդկային արտաուքի ու արհաւիրքների միջից գորուում են տարիները անգրայ, անտարբեր, ոմանց համար՝ արագ ու աննկատելի, ուրիշների համար՝ ծանր, սպանիչ դանդաղիտութեամբ: Հայ յեղափոխական կազմակերպութիւնը արդէն մի ամբողջ տասնամեակ ունի իր ետեւում, և արիւնոտ գործունէութեան այդ առաջին տասնամեակը թւում է մի փոքրիկ յաւիտենականութիւն: Որքան անողորմ ու կործանիչ եղան ժամանակի ակնքները այդ համեմատաբար կարճ տարածութեան վրայ, որքան աշխատանք ու զոհողութիւն, որքան տանջալից ակնկալութեան օրեր... Ամէն բան կատարեց սակայն երկաթէ անհրաժեշտութեամբ: Տաս տարւան մէջ թէ ծանր աղէտները և թէ փառաւոր, յիշատակելի վայրկեանները, որոնք աւետեցին հայկական վերածնութեան մասին — հաւասարապէս անխուսափելի եղան, անցքերը յաջողեցին իրար ձակատագրական, արիւնալից շղթայակցութեամբ:

Ռամիկ տրամաբանութիւնը չըմբռնեց այդ: Անցքերի պատմութեան մէջ պատահականութիւններից զատ ուրիշ բան չտեսնելով՝ նա, խեղագարութեամբ, յեղափոխութիւնը պատասխանատու բռնեց անցեալ աղէտների ու ներկայ ճգնաժամի համար: Եւ յեղափոխութեան դէմ սկսեց հայածանքը — մի հայածանք նոյնքան անմաքուր, որքան և անտրամաբան: Այն ինչ հասարակութեան առողջ ու մտածող տարրը գլխաւորապէս յեղափոխականներին դէմ ուղղեց իր յարձակումները: Եւ շատ հիմնաւոր պատճառներով: Յեղափոխութիւնը բռնաբարւում էր, որքործիչ՝ հրուշակածները շահագործում էին նրա անունը գծուծ միտումներով: Ի՞նչպէս չյարձակել, չքննադատել... Դժբախտաբար այդ քննադատութիւնը հետզհետէ վերածւեց մի հիւանդոտ տրամադրութեան: Հասարակութեան մի սոււար մասում օր աւուր շեշտեց բացասական դիրքը դէպի գործիչներն ընդհանրապէս: Նախկին խանդավառութիւնը պաղեց, յեղափոխութեան գաղափարը՝ երբեմն փայփայած ու փառաբանւած՝ զգապապէս նսեմացաւ շատերի աչքում, շատերը երես դարձրին նրանից:

Սակայն յարատե ոչինչ չկայ: Հիւանդոտ տրամադրութիւնը ժամանակաւոր և վաղանցուկ է, ինչպէս որ ժամանակաւոր է քաղաքական իրողութիւններին ներկայ աննպաստ զուգորդութիւնը հայոց հարցի նկատմամբ: Յեղափոխական գաղափարը գործի վրայ է կըքելով, գալարելով նա ճեղքում, անցնում է անթիւ խոչընդոտների միջից և ձգտում է դէպի իր բնական նպատակակէտը: Հալածւած՝ նա նորից հպարտութեամբ գլուխ է բարձրացնում, բռնաբարւած շահախնդիր «գործիչներից»՝ նա ահեղապէս սպառնում է իր դէմ մեղանշողներին: Նրանով է ապրում ու շնչում գործող կազմակերպութիւնը: Նրա կողմն են ազգի թարմ ու կորովի տարրերը, նրա դէմ՝ են թուլամորթներն ու ապիկարները: Եւ գաղափարը հզօր ու անպարտելի պիտի շարունակէ իր յառաջխաղացութիւնը: Հայհոյած ու ամբաստանւած՝ նա վերստին պիտի գտնէ ինքզինքը հասարակական մեծամասնութեան հասուն գիտակցութեան մէջ: Այդ յաղթական ընթացքին պիտի նպաստէ ամէն

կերպ գործող մարմինը, որը յեղափոխական գաղափարի թէ ծնունդն է և թէ դայեակը միաժամանակ:

Գաղափարի ուժը կազմակերպութեան մէջ է և կազմակերպութեան ուժը գաղափարի մէջ. մինը առանց մյուսի դատարկ է: Յեղափոխական կազմակերպութիւնը եթէ չէ տոգորած պէր գաղափարով՝ դատարկ ձև է միայն, արստրակցիա, ոչնչութիւն: Ազատութեան և արդարութեան բոլոր իրէաւորները ծաղր ու հեղհուլութիւն կը մնան, եթէ նրանցով չեն ներշնչուած գործող մարմնի անդամները: Իսկ երբ մի կազմակերպութեան ամէն մի անդամի և ամբողջութեան մէջ յարգուած է գաղափարը, երբ նա այդ գաղափարը թէօրիալից գործնականին վերածելով՝ կատարում է իր պարտքը ընտրած ասպարէզի վրայ, — մի այդպիսի մարմին լիապէս արդարացնում է իր գոյութեան իրաւունքը: Նա կանգուն կը մնայ և ոչ մի հողմ — արտաքին թէ՛ ներքին — չի կարող խարխել նրա հիմքերը: Այդպիսի մի մարմին երկիւղ ու պատկառանք է ներշնչում թշնամուն, նրան ատում են, հայհոյում ու հալածում են, նրան հալածում են իրրե մի ուժ, որ անյողողղ որոշած է մինչև վերջ մղել կեանքի ու մահուան պայքարը:

Այդպիսի մի մարմին ներքին քննադատութիւններից ևս բնաւ երկիւղ չունի: Լինելով ինքը ժողովրդի դատարակութեան մի գործօն՝ նա, ընդհակառակը, կարող է միայն հրճել քննադատութեան երևոյթով, որը ժողովրդային ինքնագիտակցութեան զօրաւոր արտայայտութիւններից մէկն է: Բայց միայն բանաւոր ու բարեխիղճ քննադատութեան: Տարաբախտաբար այդ վերջինը առ այժմ աննշան չափերով է գործադրում: Անաչառ քննադատութեան տեղ՝ մենք յաճախ ակնատես ենք լինում: Բողոքային ամբաստանութիւնների, անմիտ, անիմաստ գոռում-գոչումների: Ֆրազայի հերօսները աւելի քան երբ և իցէ, բազմացել են այսօր, և նրանք են, որ յաճախ իրենց ոչնչութեան անդունդից յանցաւոր թեթեւամտութեամբ քարեր են նետում բուն գործիչների վրայ: Տարակոյս չկայ, որ ժողովուրդը քննադատօրէն պէտք է վերաբերուի գէպի յեղափոխութեան վարչական մարմինները, սակայն պէտք է նաև, որ անպայման յարգուի բուն գործիչների բարոյական հեղինակութիւնը, որը նոյնանում է յեղափոխական գաղափարին:

Գժևարին ժամանակներում ենք ապրում, և գործող յեղափոխական մարմնի վրայ բարդուում են ծանրածանր պարտականութիւններ: Մղած իր պարտքի զգացումից՝ նա պիտի ձգտէ միշտ աւելի և աւելի կազմակերպել յեղափոխութիւնը. և անխնայ պիտի հալածէ բոլոր այն ուժերը, որոնք մեր թշնամու հետ գիտակցօրէն թէ անգիտակցօրէն միաբանուած՝ ձգնում են կազմակերպել յեղափոխութիւնը: Նա պիտի աշխատէ թուլացնել ներսում «չէզոքութեան» ու յուստեսութեան համաճարակը, որպէս զի կարողանայ աւելի ամուր պատւար կազմել դրսի հալածանքների դէմ: Նա պիտի աշխատէ վերջապէս — առաջնորդելով հանրային կարծիքի ողբամիտ թելադրութիւններից և վանելով տղայական հարայ-հրօցները — ըստ կարելոյն շուտ վախճան դնել յեղափոխական ասպարէզում: Ցագած բազմաթիւ թիւրիմացութիւններին, թշնամական, հակամարտ ձգտումներին և բարձրացնել գործը մինչև իր արժանաւորագոյն աստիճանը: Յեղափոխական գաղափարը սկզբներում հաստատուելուց և ապա ժխտուելուց

յետոյ՝ պիտի յանգի մի գերագոյն համադրութեամբ իր բաղձալի շրջանին, որի գծերը ընդհանրում ենք արդէն: Դա կը լինի նրա զօրացումը յեղափոխական բոլոր անաղարտ գործիչներին բնական դաշնակցութեան մէջ: «Միութեան» խնդրի կնճռոտ հանգոյցը կը լուծուի վերջապէս. հարկաւոր է միայն հասարակութեան սառնարին ու բանգէտ վերաբերումը, որ այնքան փափագելի է ներկայ պարագաներում: Յամառ, օրթօգոջս կուսակցականութեան դաւանողներէից չենք, և գործօն ուժերի վերը յիշած համախմբումը իրագործելի ենք սեպում: Նա միանգամայն անհրաժեշտ է: Երբ անկեղծ, գործունէութեան ծարաւի ուժերը դէմ առ դէմ կանգնին փոխադարձ հաւատով ու վստահութեամբ, երբ ասպարէզից վերանայ ատելի mauvaise foi-ն, ոմանց անասնական եսապաշտութիւնը, ուրիշների դաւասիրութեան ոգին, այն ժամանակ համերաշխ գործակցութեան համար ամէն խոչընդոտ կը շոգիանայ: Այդ համերաշխութիւնը գլուխ չեկաւ մինչև օրս, և մենք առաջիններն ենք, որ ցաւում ենք: Պէտք է գիտնանք սակայն ջոկել իրական ճանապարհը ցնորականից: 2 յափշտակիւք և չգայթակղելիւք «միութեան» «հրաշագործութիւններով»: Միութիւն կայ, որ առաջին վարկեանից իսկ կազմալուծման սաղմեր է բովանդակում իր մէջ: Ասպարէզը շատ է ծանրաբեռնուած անօգուտ և վնասակար ուժերով: Պէտք է մաղել: Գործը սկսած է, պէտք է շարունակել: Ի՞նչ փոյթ, թէ մի կարգ «գործիչներ» յեղափոխական գնդակից և կամ հասարակական դատաստանից շանթահարած՝ պիտի կորչին մեր սիրած գործի համար... քչւոր լինենք ասպարէզի վերայ, բայց առաքինի, յեղափոխական յատկութիւններով օժտուած լինենք, գործը յարգենք, գործով ոգևորուինք, և ոչ թէ նրան դիմակ դարձնենք մութ, շահագիտական խորհուրդների համար:

Հոգանք, որ յեղափոխութիւնը աճի ոչ այնքան տարածութեամբ, այլ մանաւանդ խորութեամբ: Այդ է եղել Հ. Յ. Բաշնակցութեան ամենակիզիչ հոգսը սկզբից ի վեր: Այդ նշանաբանը անպայման անհրաժեշտ է դիտում ամէն մի յեղափոխական դիսցիպլինի մէջ, ուր մնաց մերում: Այդ նշանաբանին յար և միշտ հետևող և գործի յառաջդիմութեան նախանձախնդիր գործող յեղափոխական մարմինը յոյս է տածում, որ հայ ժողովրդի ողջախոհ, մաքուր ու անվթար ժառը կաշկեց յեղափոխական կրկեսում և նրանից դուրս գանուող գործիչներին՝ դուրս շարեւելու ասպարէզից նեխած, վարակիչ տարրերը և գլուխ բերելու նոյն նպատակին ձգտող և յեղափոխական գաղափարի անխարդախ դաւանող՝ հակամարտ ուժերի բաղձալի համադրութիւնը:

Թ Ի Ի Բ Գ Ի Ո Յ Ծ Ո Ի Բ Զ Ը

Ամիսուկէս անաղ Անգլիոյ Քարիօֆ քաղքին մէջ հայտնուօգտին միթիւնկ մը եղաւ, հետևոր արծազանդ մը երբեմնի կրոնա միտնիւններուն, բայց աւելի համազուն ու կծախուշ ծայրարկով մը: Զարմասանւեցանք սուլթանի դէմ այն աւանդան (օրդուս) ծառերն ու սպանակները որոնք նրբեմն աշխարհ դողեցնել: Այն ժամանակներն էր որ «Թալուզ» սպանակներու կը գտնուէր «Թիւրքիստան» պէտք է սա զիմաս: որ Անգլիա, կիծ գրասաւոր մըն ալ մաս: իրեն, իր նպատակը: անաղ ևը քչէ:

Կամ ասոր մտ ըան մը: Բայց այդ ամէնը կարծես լեզուի ծօթէ արծկած սլաքներ էին, սրտէ չէին ընար. որովհետեւ Համիդ անգլիական ատենախօսներուն ու լրագրերուն փեր- փրուն արշաւանքին դիմաց ամէնէն արարածիկ ողբերգութիւն- նը ներկայացուց եւ Անգլիան սիրտ չըբաւ իր կախարական խաղկիմբն մէջ սուլածանի մը ընթաց արդեն, ինչպէս պիտի ընէին Մակեթի վնասները: Անգլիական զորազօրէն, առարկ (վատ) սուլածաններէն, մէկ բան մը միայն մնաց «Մեծ Մար- դասպան» յախտնական անուշը զոր Մեծ ծերունին մեհնա- ողորմից պատուութեան էջերուն եւ մարդկային սրտին մէջ: Այդ կարուկ, եւ անոնը դարձանք իմ եւ ինչի կայծը եղող անունն է որ երբեմնակի ուրուի պէս կը սլալայ շղայնիկ մարդկութեան թարթիչներուն կառնելով: Բայց Գլադստոն չէր ուզեր ըսել թէ միւս ընտանողներն ալ փինթի մարդասպաններ չէին:

Անգլիոյ մէջ հայերու ինչպիսի թնթիւ արթնացում մը, արեւելեան հարցին նպատակն արդարէն մէջ, ուշագրաւ է: Ամէ- թիկայի յաղթութիւնը՝ զոր ծածուկ կամ երես խրախուսեց Անգլիան, եւ որ յեղաշուջեց դիւանագիտական շատ մը են- Մաղուրդութիւնները եւ անդրադարձում մը առաջ ընելու, ցարին ուղարկ-ընտելակամը, Կրէտէի խնդրին անդարձ լուծումը, Մէհ- դիի ջանքախումբը, Ժայռազոյն Արեւելքի խճող կացութիւնը, Անգլիոյ ծովային պատրաստութիւնը, եւ ուրիշ թափառիկ երո- դութիւններ դիւանագիտական նոր տեսակէտեր ու աշխարհայե- ցութիւններ ստեղծեցին: Այս համաշխարհային խոռովքին առջեւ սակայն սիփիսքը մունջ ու պիշ կեցած իր յախտնական հար- ցուից կընէ «գիտցիք, կրնաս նէ»:

Ասանց անխօսուկ սիփիսքին առեղծաւոր դէն ընելու եւ միջազգային պարզուն երեւոյթներն անտեսելու, յեղափոխու- թիւնը պէտք է որ ակնկալուէ բայց ժիր ու կազմուէ շքա- հայեցութիւն մը ու աշաւըութիւն մը պահէ:



Զարտիֆի ժողովը զուտ մարդասիրական էր: Համիդ, որ սուսէ փութացած էր «մե ընէք» ըսել անգլիացիներուն պա- տրակելով թէ միւսիւրմաններուն զգացումները կը զբզուին. հա- յոց դէմ երկու մասնաւոր սոսգիք զացած էր ժողովը ատե- նազբերու եւ սուլածանի խրկելու համար: Համիդ անոր հա- մեմուտ պիտի շահէր իր Զարթի ծրագրերը:

Ժողովը տեղի ունեցած է սեպ. 23-ին: Անգլիական 40 տարբեր քաղաքներէ ներկայացուցիչներ ժամադիր եղած էին միթիսկին:

To part the glory of a happy day 1)

Ժողովին նպատակն եղած է Անգլիոյ մէջ գտնուած ընկե- լութիւնները միացնել, ձեռք ձեռքի գործել եւ այլն: Ժէյմս Բրայս ժողովը բանալով յիշեց մասնաւորապէս թէ երեսն շե- պատակն էր մարդ ա տիր ա կան միութիւն մը կազմել «հայոց բարեկամներուն» միջեւ եւ թէ ժողովը քաղաքական ո՞ն է դիտում չունէր: Նախ որ քաղաքական խնդրը հանելով անգ- լիական կառավարութեան զործներուն պիտուք մը ըլլալէ զատ, անօգուտ պիտի ըլլար, քանի որ այժմ Կրէտէն երկուսիք ծանր կացութեան մէջ կը գտնուէ: Ուստի խոհեմութիւն չէր կառավա- րութեան ուշադրութիւնը ցրել: Երկրորդ յիշելով սուլածանի շափազանց հեռաբերելիքը սոյն ժողովով, անտեղի սեպեց զբը- զիւ տալ մարդու մը որուն հետեւանքը պիտի ըլլար նորոնր Զարթի:

Այս բացման ծառէն յետոյ Հայաստան մասն գալոյց անգ- լիացիները իրենց զործնութեան տեղեկագիրը ներկայացնե- լով ժողովին, շեշտեցին թէ թշուառութեան բուն պատճառը սուլածանն եղած էր:

Բէյքըրիի պրօֆէսոր Հէրիս խօսեցաւ ակնի կրակոտ լեզ- ւով: Ապա Սթիվենսըն առաջարկեց որ ընկերութիւնը իր աշ- խատութիւնը շարունակէ մինչեւ որ հայերը արտաքին ո եւ է օգնութեան կարօտ չունենան:

Երեկոյին քաղքին մեծ սրահին մէջ տեղի ունեցաւ հրա- պարակային ընդհանուր մեծ ժողովը որուն կը նախագահէր Լէնդիֆի լորտ եպիսկոպոսը: Ժէյմս Բրայս հայոց պատուութիւնը Բուէնօֆօնէն մինչեւ մեր օրերը ազգու եւ վիճիտ կերպով հա- մառօտագծելէ ետք հարց դրաւ թէ իրենք ինչ պարտակա- ութիւն ունէին ասանկ աննշան ու օտար ազգի մը օգ- անելու. «Նախ իբր մարդ անհնար էր անզայ մալ թիւրք պետութեան զործնէ խոհմութիւններուն եւ ժողովողի մը ան- հուն թշուառութեան հանդէս: Երկրորդ քաղաքականապէս պար- տաւոր էին հետաքրքրուի հայերով քանի որ երբեմնի սխալ քաղաքականութիւնով մը մերժած էին Ռուսիոյ արեւելեան հար- ցը համարաշխարհէն լուծելու ըրած առաջարկը եւ թիւրքիոյ հա- մար պատերազմը՝ հրատարակած էին Ռուսիոյ դէմ, արեւելեան քրիստոնեաններու պաշտպանութիւնը խելով Ռուսիոյ ծանկէն:

1) Երջանիկ օրան մը փառքին կցորդ ըլլալու համար:

վերջին դէպքերու միջոցին Ռուսիա, իբր վրէժ, հակամարտա- կան ուղղութիւն մը բռնեց. իսկ միւս պետութիւնները անվա- տան նայեցան Անգլիոյ վրայ: Գ. Բրայս անցեալի տրամաբա- նութիւնով ակնտնարու պատասխանատուութեան մեծ մեղքը Անգլիոյ ծիրք ձգեց:

Երրորդ յիշելով հայոց ընտանեկան կենսի մարդութի- նըն ու պարզութիւնը, անոնց քաղաքակրթելու ընդունակութի- նըն ու ժողովութիւնը, ըսաւ, կ'արժէ որ այս տեսակ տոկուն դարերու ազգ մը քաղաքակրթութեան ծմարիտ ծամբուն մէջ դնենք:

Սթիվենսըն հերքելով այն թիւր կարծիքը թէ հայերը ինք- զինքին կառավարելու անընդունակ են՝ թիւց բոլոր հայ պե- տական, գիւղարական ու կրօնական անձնաւորութիւնները որոնք գանազան պետութեանց կամ իրենց ազգին մէջ բարձր տա- ռանդի եւ ընդունակութեան հիմնալի հաւաստիքը տուած են:

Բէյքըն Մէքքըլ եպիսկոպոսը անկեղծ բայց կծան լեզուով մը յորդորեց սուլածանը որ հայերուն պէս օգտակար տարր մը փոխանակ հալածելու, ոչնչացնելու, սիրաշահի, չոյէ. քանի որ անոնք երկրին մեծ ծառայութիւն կրնան մատուցանել իրենց խաղաղ արեւցոյթեան մէջ: Հասկցուց սուլածանին թէ ինք բա- ընկամ-կարծածները իր թշնամիներն են որոնք լէշուտող գա- զաններու պէս իրենց որսը լաւ մը կը ցեցնեն, կը ծգմեն ա- նոնց զօրի կլլելու համար:

Սուլածանին շուտով իմաց ըրին բոլոր խօսըտուցները. բայց խա- լիքան, դարուս ամէնէն մեծ հեզնողը եւ չնախողը, ծիծաղ մը ըրաւ անշուշտ, մուլթատան իսաւարում ամպեղու մէջէ՛ կածկ- տող շանթի մը պէս, եւ հուտաց «Ենթադր կեանքուրար, դեռ իմ զօրք չեն ծանչցեր...» որովհետեւ, ինչպէս կան համար- նեք, որոնց մէջէն ամբողջ ազգի մը հոգին կը ցուցայ ազա- տութեան արծանի մը գլխուն վրայէն ծառագած լոյսն պէս, այնպէս Համիդի անձնաւորութիւնը կը արմամացէ՛ ազգի մը ա- մէնէն տխուր, ամէնէն զարջ մասնութիւններու հատընտիր ժո- ղովածուն, ուր ներշնչած ամէն բարութիւն, մարդկային ամէն վսեմ զգացում կը սնքին ու կը թռնին անխածինի մէջ փակ- տող կենդանութիւններուն պէս. ժըքեցէք անոր հոգին, հոն պիտի գտնէք արդարութեան, բարութեան, գթութեան մեռնները անգթութեան ծիրաններուն ու սարսափի արհեստովկ ծաղկե- բուն տակ հոգեփչած...:

Սկզբունքով որքան ալ մարդասիրական սասմանին մէջ պի- տի ժուռ զար ժողովը, բայց պզտիկ ցատկերէ ու փոխաբը- ութիւններէ գուրկ չէր:

Ներկայ միջազգային խուճապ զուգորդութիւններուն, արե- լեկեան հարցին սուր կացութեան, թիւրքիոյ տեղատես վիճա- կին մէջ, մարդասիրական սասմանէն դուրս շեղիլ իմաստութիւն չէր: Մասնաւոր ու անցեալի դերու փորձերը, խօսքի ուսման- քը օրային պումպիլը միայն առաջ ընդին եւ ոչ ուրիշ բան: Անգլիան այս պահուս, ինչպէս կը ըսէ, «ձեռքը կրակն» է ոչ այն հասարակածի կրակը զոր շուտով մարեց. այլ այն հսկայ «գոյութեան կրակ» զոր կը մղէ հողագործի ամէն պիտերուն վրայ, ուր անգլիական գիտակցութիւնը իր գոյութիւնը հաստա- տած ու. սա մեծամիտ վիճիղ արծակած է Rule Britannia (աշ- խարհավարէ, Բրիտանիա):

Սուգրիի միջազգային քաղաքականութեան մասին վերջին ծառը անգլիական արհամարհոտ մեծամտութեան նմոյշ մըն էր: Նախարարապետը խորհրդաւոր եւ առածական հետադրութեան մը տակ, անգլիական կամուրջութեան ու վճռակալութեան ներ- ըող մը ընելով տեսակ մը նախագազուրութիւն կը քարոզէր- եւրօ- պական ազգերուն որ շփոթման իրենց: Այդ ծառը որքան ալ մոռնիք հանդարտեցնելու խազեր կը պարունակէր մէջը, բայց նախարարապետը, իր լաւատես աշխարհայեցութեան վրայ յո- նետեսութեան շղարք մը ձգեց ապագայի տեսակէտով: «Մըքը- կամս մը կը բարձրանայ հօրիզօնը այնքան արագութիւնով որ ամէն հաշի կ'արհամարհէ» ըսաւ: Յետոյ ընկերա-փիլիսօփայա- կան հարցերու մէջ մտնելով, ինչպէս կը սիրէ ըսել այդ խո- շուն «ա գ գ ու ն ե ղ է գ ը, թիթիւ հոգի անխորթութիւնով մը զբորցուց, «Եւրոպական պետութիւններ կան որոնց կառավարութիւն- ները այնքան գէշ են որ ոտքի վրայ անգամ չեն կենար կե- նակ ոչ ուժ ունին ինքնապաշտպանութեան, ոչ ալ իրենց հը- պատակներուն սէրն ու գորովը կը վայելեն»:

Սուգրի այդ թէ գ ը նախորդ ծառի մը մէջ ակնի պարզաբանած է, եւ ըն ա կան ըն տր ո ո ղ թ ե ա ն ս կ զ ը ը ի ի ն վրայ հիմնած: Բայց այդ «գէշ պետութիւններ» ամէնէն խոշորը Թիւրքիան ըլլալու է: Սուգրի իր ակնարկութիւններուն մէջ յաման բաղ- ղատութեան կըր կ'ընտրէ Համիդի անուշիկ երկրքը, որուն վրայ անգլիական նախարարապետը շեղի շահի հաւատք չունի. ալ կորած է իրն համար անիկա, թաղումը պէտք է ընել միայն: Այդքան խորի յոնետես մը ըլլալով հանդերձ պետու- թեան մը մասին որ իր վարտիքը անգամ չի կրնար կապել ու անհրձ նստիւ ձգել երկրքը իր ընական վիճակին եւ հան-

դիստեսն ԵԼԼԱԸ մարդկային արժանապատուութիւնը ցնկտող Լըբուժիչներու, Սուղբերի իրապաշտ փիլիսոփայութիւնը ար- ղարացում չի գտնիր, գոնէ թիչ մը քննասացում անհրաժեշտ է:

Տոմսն ու կաստէր Ալբիոնը, նոր աշխարհի շնչով հոգե- ւորած, գոնէ պիտի կրնա՞ իր խնամքով զոտոգութիւններուն, փրոնն առածներուն հաւաստիք մը տալ իր խղճին ու պատկին պարտքը կատարելով: Այն ատեն կարելի պիտի ԵԼԼԱԸ ըսել «Անպատկան խորհրդարանը ամէն բան կարող է ընել, բացի մարդ մը կին, կամ կին մը մարդ ընելէ»:

\* \* \*

Կրէտէն ալ ողջնաւ. պատմութիւնը ալ պիտի զոցէ, սար- ասովներուն սահմանը. տասնը ուրիշներուն: Պատմութիւնները ա- նողոր կամքի ուժով մը, թիւրք գինւորներուն ու իշխանութիւն- ներուն բնակը շարակին կրտսան կը ծամբեն, թիւրք գինւո- րի մը շուքը շահտի մայր հոն: Բրիտանիաները պատրաստու- թիւն կը յայտնեն գինաթափ ԵԼԼԱԸ: Պատմութեանց դրօշները կը ծամանին կղզիին մէջ սրտնց քով ինձնօրէն կ'երկրայ օս- մանկան աղաղտ դրօշը: Զարդի նոր հինգ հեղինակներ եւս կ'ախեցան:

Լուր կը շօշի թէ պետութիւնները Կրէտէն ետքը Փոքր Ասիոյ ու Մակեդոնիոյ ինձնքը անջնա պիտի դնեն:

Դուրը չորս պետութիւններուն հօթը կէտով ծանուցազիր մը կրկնած է որով կը ինչոքէ որ Կրէտէն կայսրութեան ամբողջու- թեան մասը մնայ. Օսմանեան դրօշը գործածելի կղզիին մէջ. Դատարարութիւնը սուլթանի անունով ԵԼԼԱԸ. բաւականաթիւ գինւոր մայր կղզիին մէջ սուլթանի վեհապետութեան՝ երբ նշան, կայսեր գամծոն հաստատ տուրք մը տրելի եւ այլն:

Վերջապէս կրէտեցի փախալիներն հասան. հրէշ Մէնուա- րօսը սպաննեցին: Աւերուք է ըսել թէ այդ անծուէր ժողովուր- ղը, հնչալէս ամէն ժողովուրդ որ Թիւրքիոյ անհիմալ լուծէն պրծած է, պիտի քաւէ դէպի քաղաքակրթութիւն եւ Թիւրքե- րը պիտի ցաւով մը պիտի մրման. «մեր ձեռքէն կ'ստի կրկնան սիւստի ու ինչո՞ք ազգերը մարդ կ'ըլլան, մենք 500 տարեան մեծ պետութիւն մը տղէտ ու զանախ գամնած մնացնիր»:

Վասն ծնգի, բայց օն ԵԼԼԱԸ:

### Վ Ա Ր Պ Ե Տ Ի Ն

գրաստութիւնը ԿՐԵՏԻ ՅՈՇՆԱՍԻՐ 1)

Ձարկ, գարկ, այ վարպետ, շէկ կայծեր թռցուր,  
Առանէ սարգ, ձե տուր մետադիր.  
Բաժի տուր փոքրիկ, թորերն ուռեցուր,  
Մրձարծէ բոցը հանգած հընցիդ:

Թանգոտ բիրտ երկաթըն «օձախը» խրէ  
Անձե երկաթիդ բերան շինէ սուր,  
Դժոխքի բոցով բարկ մետաղը ճրգմէ  
Ձե տուր պոզպատին, կոփէ, փայլեցուր:

Ձար բախտն երկաթին կապեց մարդուս կեանք,  
Երկաթն է վճռող սե ու կարմիր օր.  
Առանց երկաթին արդարն անվերանգ  
Ե՞րբ անցաւ երկրիս ուղին նենգաւոր:

Այդ նենգ ուղին փշոտ ու մթին  
Յատակադի՞նք արիւնն է գծած.  
Ինչո՞ք ու ճրկեալին, ստորկ-գերիին  
Իրաւունք վճռող լոկ սուրը մնաց:

Երկաթն երկաթին կը փշրէ մէկ օր,  
Եսն ու բռնութիւն կը դառնան գերի.  
Շուռ կուգայ աշխարհը. գերին դարեւոր  
Կը փոխի տէրի, և ոխը՝ սերի:

1) Կարծն Արիստակէս Զօրեանն է, Խաւսարի հերոսներէն մէկը. տես «Գրքակ» № 16 — 1897:

Ուժով զարկ, վարպետ, կայծեր թռցուր,  
Հանգած հընցիդ մէջը կատարի  
Ահեղ վրէժի դրժոխք բռնընկուր,  
Որ շուտով փշրես շղթադ ստրկի:

ԱՎՈ

### Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն

#### ԽՐԱԿՐՈՒԹԻՒՆՆ ասացած է՝

Յիւրիսէն՝ Ժարն 5 ֆրանկ:

#### ՏԱԿԱՐ ԿԵՂՐ. ԿՈՒՄԵՆ՝

Օգոստոս ամսու մուտք. — Ջրվէժ շրջ. 27 դահեկան, Եւ- փոթ շրջ. 10, Գեղձուկ շրջ. 10, Մուլիշ շրջ. 35, Բողոյ շրջ. (յունիս, յուլիս, օգոստոս եւ սեպտ.-ի ամսավճար) 65, Աշա- կիւտ 10, Հրաշ շարժավճար 5, եւս 5:

Սեպտ.-ի մուտք. — Ջրվէժ շրջ. 27 դահեկան, Մուլիշ շրջ. 35, Գեղձուկ շրջ. 10, Եփոթ 10, Հրաշ (շարժավճար) 5, Ա. Բ. Թ. 20, Ս. Բ. շրջ. 10:

#### ՎԻՃԱԳԻ «ՄՏ» ԿՈՒՄԵՆ՝

Կախաղան 44 դահեկան, Փէնըն, Ջրվէժ, Կ. Հրապուկ, Սշարքակ 20-ական, Մօսիւն 18, Տարօնց, Կամուտ, Վարն, Սեպտեմ 10-ական, Դաւիթ քէկ, Զ. Փ. Երամոյ 5-ական:

#### ՈՍԿԵՂՆԵՐԻ ԿՈՒՄԵՆ՝

Որոտում խ. 10 դահեկան, Արիւն խ. 20, Եամթ խ. 8, Ռուբինեան խ. 11, Հարջիմ 20 եւս 20, Թովմաս գալիս 5, Օշարակ 20 (չորս ամսավճար), Բուրք քաղաքէն 140, Սիւ Բերդէն 8. Պ. Յուսաղիք 20:

#### ՆԱԿԱՆԱԳԱՅԻ ԿՈՒՄԵՆ՝

Կարմիր քաղաքէն. Լեւոն 300 ուրբի, Երկրագործ 250, Եարս 100, Բարի մարդ 50, Յովանէս 30, Ներսէս 20, Տե- նիգ, Նաղարէթ, Արշալոյս, Վրթանէս 15-ական, 8. Գ. 5, Զրա- շէնի կամանց Անահիտ կմբի միջոցով Կարմիր քաղաքի մաս- նածիւղէն 16: Գումար 831 ուրբի:

Ժերոնի 100 ուրբի, Սիմոն 20, Գասպարիկ 15, Հարա- սունի, Արշակ 5-ական, Ժառ 3, Տէնիկ, Մարշ, Լուսակ, Աշոտ- րակ, Նահապետ 2-ական, Զրաշէնի Կ. Անահիտ խ.-էն Կար- միր քաղաքի մասնածիւղի Նախածնումութեամբ վեճակահանու- թեան զուտ արդիւնք 98. 80, Մայր քաղաքէն Աշոտ Երկաթ 300, № 44 100: Գումար 656 ուրբի 80 կօպէկ:

Կոյս քաղաքէն՝ Վարդ 6 ուրբի Արամ 4, Հացիկ 3, Ա- րաքս, Արդարաւէր, Ախուրեան, Ժաղիկ, Երկաթ, Արսէն, Ար- շակ, Վաղարշակ, Զգոյշ, Արամալիս, Հեծանիւ 2-ական, Սիզար 1: Գումար 36 ուրբի:

Երնք քանտարկեալի համար կամանց «Նորարոյս» կմբից 88 ուրբի, 8. Կատար 3, 8. Օսկիւտ 2, Զորթան 1: — Նոր- Բերդից 4. Գ. 50, 8. Ամնա, 8. Գ. 4. 0. 15-ական, Գ. 8., Ա. Ն., Գ. Թ., 8. Մ. 10-ական, Ս. Վ., Ս. Գ. 5-ական, Պ. Վ. 3, 8. Դուրաք, 8. Զարդար, Ս. Մ., Դ. Դ., Գ. Գ. 2-ական, 8. Բ. 1 ու կէս, Ա. Թ., Ա. մ., 8. Թ., 4. Թ., 8. Խ., 8. Խ., 8. մէկմէկ: — Սեւհողերից՝ Միկիւ 10: Ամարանոց քո.-ի «Մարս» խ. 25: «Մարս» խ.-ի ստացած նւէրներ — Մահակ Գալ. Խոսիկար- անի, Գրեգոր Սո. Թամամեան մէկմէկ: Գումար 296 ու կէս ուրբի:

Համագումար 1,820 ուրբի 30 կօպէկ:

#### ԿԱՅԻՐԵՆ ԿՈՒՄԵՆ՝

Վասակ Սուրէն 40 դահեկան ողջ, Դեղամ 20 եւս 20, Կայծակ 20, Բոննց խ. 20, Հայկազ 10, Աւլան 5: Գումար 135 դահեկան ողջ:

Վ. Բ. Գ Ա Կ. — № 8 (88) Նաւահանգստի ցուցակ Կարմիր քաղաքի Պարիզեցի ուղղելի Պատիւնիկ: Կոյս քաղաքի Վար- պետ, Նայիմ, Եարաման, Արզար ուղղելի Վարդ, Հայկե Եա- րական, Սիզար: Մոտցած է Արամ 22 ուրբի:  
Կոյս Թ.Ի. մէջ Բալկանեան Կ. Կոմիտէ Սահմանք 40 ֆրանք սխալմամբ կրկնած է. տես № 6 (86)-ի ցուցակ: